*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՎԱՅՈՑ ՁՈՐԻ*

*ՄԱՐԶՊԵՏ*

<<05>> <<դեկտեմբեր>> 2016 թ N 138
ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՍՈՒՐԻԿ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Նաիրա Հովհաննիսյանի հետ կնքած 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N202 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

*ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ*

1. 2016 թվականի դեկտեմբերի 5-ից Սուրիկ Թաղևոսյանին ազատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Խաչիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքած 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N202 աշխատանքային պայմանագիրը:
2. 2016 թվականի դեկտեմբերի 5-ից Սուրիկ Թաղևոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Խաչիկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ